

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	8
3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ	10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	14
5. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աշխարհը, համավարակի հետևանքները դեռևս ամբողջությամբ չհաղթահարած, բախվեց նոր մարտահրավերների՝ կապված ռուս-ուկրաինական հակամարտության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական և տնտեսական խնդիրների հետ: Այս պարագայում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում 2022 թվականին արձանագրվել են բավական լուրջ բացասական զարգացումներ՝ պայմանավորված համաշխարհային արժեշղթաների էական խաթարումներով, ապրանքների և ծառայությունների գների բարձրացմամբ, բարձր գնաճին հակազդելու նպատակով այդ երկրներում իրականացվող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականությունով և այլն:

Ի տարբերություն գործընկեր երկրների՝ ՀՀ տնտեսության համար ռուս-ուկրաինական զինված հակամարտության բարենպաստ ազդեցությունը գերազանցեց բացասականին՝ պայմանավորված ՌԴ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքով, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ռուսաստանյան և բելառուսական բազմաթիվ ընկերությունների՝ ՀՀ տեղափոխմամբ, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով շատ երկրներից ՌԴ ներմուծման սահմանափակումների հետևանքով ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման ավելացմամբ: Արդյունքում, 2022թ. առաջին ինն ամիսներին արձանագրվել է տնտեսական ակտիվության 14.1% աճ: Ընդ որում, նշված ժամանակաշրջանում թողարկման աճ է գրանցվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) աճն առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի ոլորտների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.6 և 5.4 տոկոսային կետ: Արդյունաբերության և շինարարության աճերը ևս նպաստել են տնտեսական ակտիվությանը (համապատասխանաբար՝ 2.6 և 0.7 տոկոսային կետով), մինչդեռ գյուղատնտեսության նվազումը ՏԱՑ-ի աճին հակազդել է 0.1 տոկոսային կետով:

Արդյունաբերության համախառն թողարկումը 2022 թվականի առաջին ինն ամիսներին աճել է 10.0%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 11.3 տոկոսային կետ): Իսկ հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է անկում, ինչի բացասական նպաստումն արդյունաբերության աճին կազմել է 1.7 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության աճը պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճով: Մի կողմից՝ ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված աճն ավելացրել է մշակող արդյունաբերության որոշ տեսակների

նկատմամբ պահանջարկը, մյուս կողմից՝ ՌԴ-ում ներմուծման ուղղությունների կտրուկ նվազումը և ՌԴ շուկայում հայաստանյան արտադրանքի գնային մրցունակության ավելացումը դրականորեն են ազդել ՀՀ-ից դեպի ՌԴ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա: Աճին հիմնականում նպաստել են այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (նպաստումը՝ 7.5 տոկոսային կետ), սննդամթերքի (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ) և հիմնային մետաղների (նպաստումը՝ 3.4 տոկոսային կետ) արտադրության ծավալների աճերը:

Շինարարության ոլորտի 14.3% աճը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումը՝ 13.5 տոկոսային կետ), որը հիմնականում կապված է հիփոթեքային վարկերի տոկոսների՝ եկամտահարկից վերադարձման ծրագրի գործունեության ժամկետային սահմանափակումների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքի պայմաններում բնակարանային շուկայում պահանջարկի աճի հետ: Շինարարության աճին դրական նպաստում է ունեցել նաև պետական ներդրումների, մասնավորապես՝ համայնքների (1.5 տոկոսային կետ) միջոցներով ֆինանսավորվող շինարարության աճը: Մինչդեռ բնակչության և պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալները նվազել են՝ բացասաբար ազդելով ճյուղի աճի վրա:

Ծառայություններն աճել են 27.1%-ով: Ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.8, 6.0 և 4.3 տոկոսային կետ:

Առևտրի 14.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 12.1 տոկոսային կետ):

Ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ սանկցիաների հետևանքով ՀՀ ժամանող ռուսաստանցիների թվաքանակի աննախադեպ աճը (Հայաստան այցելած ռուսաստանցիների թիվը 2022 թվականի առաջին ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.4 անգամ) դրականորեն է ազդել ծառայությունների որոշ տեսակների վրա:

Արտաքին առևտրի ցուցանիշները նույնպես էականորեն աճել են: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների աճը գնահատվում է մոտ 48%, իսկ ներմուծմանը՝ 36.0%: Դոլարային արտահայտությամբ արտահանումն աճել

է 63.8%-ով, իսկ ներմուծումը՝ 61.6%-ով: Քանի որ 2022 թվականի ինն ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բացարձակ մեծությամբ ներմուծման ծավալն աճել է 2,209.8 մլն դոլարով, իսկ արտահանմանը՝ ընդամենը 1,366.9 մլն դոլարով, ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ խորացել է 58.4%-ով:

Գործազրկությունը 2022 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում նվազել է, իսկ աշխատավարձերը՝ աճել: 2022 թվականի հունվար-սեպտեմբերին գործազուրկների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 11.7%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է շուրջ 5.4%-ով: Վարձու աշխատողների թվի աճը մեծապես պայմանավորված է մեծածախ և մանրածախ առևտրի, տեղեկատվական տեխնոլոգիաների, կացության և հանրային սննդի կազմակերպման, շինարարության, մշակող արդյունաբերության և տուրիզմին սպասարկող այլ ոլորտներում աշխատողների թվի աճով, ինչն առավելապես ՀՀ ժամանած զբոսաշրջիկների և աշխատանքային միգրանտների թվի ավելացման արդյունք է:

Նշված ժամանակաշրջանում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա համեմատ աճել է 13.4%-ով: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.5%-ով, իսկ ոչ պետականում՝ 16.2%-ով: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ **8.6% գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը, մեղմ ասած, ավելի համեստ է՝ 4.4%:** Ընդ որում, **պետական հատվածում իրական աշխատավարձը նվազել է շուրջ 3.8%-ով:**

2022 թվականի ինն ամիսների ընթացքում գնաճի տեմպերն արագացել են: Միջին գնաճի բարձր տեմպերն առավելապես պայմանավորված են եղել «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 13.6% գների աճով (նպաստումը գնաճին՝ 5.1 տոկոսային կետ):

Հիմնականում գնաճի տեմպերի արագացումով է պայմանավորված, որ ՀՀ կենտրոնական բանկը շարունակաբար խստացրել է դրամավարկային պայմանները, մասնավորապես՝ բարձրացրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: 2022 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրել է հինգ անգամ՝ տարեկան 7.75%-ից հասցնելով 10.5%-ի: Ընդ որում, այդ հինգ բարձրացումներից չորսը (2.25 տոկոսային կետով) կատարվել են մինչև սեպտեմբերի 30-ը:

Գնաճի տեմպերի արագացումը որոշ չափով զսպվել է ՀՀ դրամի արժևորմամբ: ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-սեպտեմբերին արժևորվել է շուրջ 14.1%-ով, եվրոյի նկատմամբ՝ 27.7%-ով, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 5.9%-ով: Դրամի արժևորման ազդեցությունն աստիճանաբար արտացոլվել է ներմուծվող ապրանքների գներում:

Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2022 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 155.8%-ով և կազմել շուրջ 1.7 մլրդ դոլար: Ընդ որում, ՌԴ-ից զուտ փոխանցումները կազմել են շուրջ 2 մլրդ դոլար:

Ռուս-ուկրաինական զինված հակամարտությունը ՀՀ տնտեսության համար ունեցել է զգալի բարենպաստ ազդեցություն՝ ի հաշիվ ՀՀ տեղափոխվող որակյալ աշխատուժի, կապիտալի և կազմակերպությունների: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ տնտեսության վրա հակամարտությունն ունի նաև բացասական ազդեցություն՝ պայմանավորված, մասնավորապես, գնաճի արագացմամբ և դրամի արժևորմամբ: Այս պայմաններում, կառավարությունը պետք է արդյունավետ միջոցառումներ իրականացնի՝ դրական զարգացումները պահպանելու և բացասական հետևանքների շուրջ ձևավորված ռիսկերը մեղմելու ուղղությամբ:

Ըստ էության, չի կարելի բացառել աշխարհաքաղաքական իրավիճակի այնպիսի փոփոխության հնարավորությունը, որի պարագայում բարենպաստ ազդեցություն ունեցող արտաքին գործոնները դադարեն գործել՝ բացասաբար անդրադառնալով ՀՀ տնտեսական աճի վրա:

2022թ. ինն ամիսներին բարձր տնտեսական աճի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող:

Պետական բյուջեի եկամուտների գերակատարման և ծախսերի թերակատարման արդյունքում 2022թ. ինն ամիսների ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ պլանավորված պակասուրդի փոխարեն:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2022 թվականի առաջին ինն ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,500.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին գերազանցում է 24.9%-ով:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	Ինն ամիսների փաստացի	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստացի	Կատարողական ը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,201.5	1,395.9	1,440.7	1,500.8	104.2
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,137.3	1,334.9	1,368.7	1,405.8	102.7
Պաշտոնական դրամաշնորհներ	5.7	17.4	14.0	12.6	90.3
Այլ եկամուտներ	58.5	43.6	58.0	82.4	142.1

Իննամսյա ծրագրային ցուցանիշի համեմատ բյուջեի եկամուտները գերակատարվել են շուրջ 4.2%-ով (60.1 մլրդ դրամով), իսկ հարկային եկամուտները՝ 2.7%-ով (37.1 մլրդ դրամով):

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. ինն ամիսների փաստացի (մլրդ. դրամ)	2022թ. ինն ամիսների փաստացի (մլրդ. դրամ)	2022թ. ինն ամիսները 2021թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,137.3	1,405.8	123.6
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,102.8	1,315.0	119.2
ԱԱՀ	383.0	468.1	122.2
Ակցիզային հարկ	76.0	85.1	112.0
Շահութահարկ	131.5	192.5	146.4
Մաքսատուրք	62.5	34.5	55.2
Եկամտային հարկ	318.4	348.5	109.5
Շրջանառության հարկ	22.7	29.0	127.8
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	31.7	46.6	147.1
Բնապահպանական հարկ և քնօգտագործման վճար	48.0	71.5	148.8
Այլ հարկեր	33.1	39.3	118.6
2. Պետական տուրք	34.5	90.7	263.0

Դիտարկվող ժամանակաշրջանում հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 23.6%-ով և կազմել 1,405.8 մլրդ. դրամ (ընդ որում, բացի մաքսատուրքից, մյուս բոլոր եկամտատեսակների գծով արձանագրվել է աճ): Աճին հատկապես մեծ չափով նպաստել են ավելացված արժեքի հարկը (աճը՝ 22.2%, նպաստումը հարկային եկամուտների աճին՝ 7.5 տոկոսային կետ), շահութահարկը (աճը՝ 46.4%, նպաստումը՝ 5.4 տոկոսային կետ) և պետական տուրքը (աճը՝ 163.0%, նպաստումը՝ 4.9 տոկոսային կետ):

Մաքսատուրքի 44.8%-ով (28 մլրդ. դրամ) նվազումը հիմնականում պայմանավորված է ՌԴ կողմից փոխանցված մաքսատուրքի նվազմամբ:

Ինչպես և նախորդ տարի, պաշտոնական դրամաշնորհների ստացման մասով պլանը թերակատարվել է: Ճշտված պլանով նախատեսված 14.0 մլրդ. դրամի փոխարեն ստացվել է 12.6 մլրդ. դրամ: Ընդ որում, նախապես բյուջեով պլանավորված էին 17.4 մլրդ. դրամի պաշտոնական դրամաշնորհներ: Դրամաշնորհների գծով ծրագրված մուտքերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է

Նպատակային ծրագրերի ցածր կատարողականով ինչը, թերևս, նշանակում է, որ կառավարությունը չի կատարել դրանց ստացման համար անհրաժեշտ նախապայմանները կամ սահմանված աշխատանքները: Նպատակային դրամաշնորհային ծրագրերից մեկի դրամաշնորհն ընդհանրապես չի ստացվել: Եվս 19 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են մասնակիորեն՝ 38.4%-ով (4.4 մլրդ դրամ):

Բյուջեի այլ եկամուտները գերակատարվել են շուրջ 42.1%-ով (24.4 մլրդ դրամով)՝ կազմելով 82.4 մլրդ դրամ: Նման բարձր կատարողականը մեծ չափով պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարների, ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի ծրագրային ցուցանիշների գերակատարմամբ:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2022 թվականի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 7.4%-ով կամ 100.2 մլրդ դրամով և կազմել 1,449.3 մլրդ դրամ՝ պայմանավորված թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերի աճով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ պետական բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ **թերակատարվել են 13.4%-ով** (223.8 մլրդ դրամով): **Հատկանշական է, որ թերակատարման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի (թերակատարումը՝ 10.3% կամ 154.5 մլրդ դրամ) համեմատ ավելացել են: Ընդ որում, թերակատարվել են ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերը՝ համապատասխանաբար 8.6 և 36.8 տոկոսով:**

Ուշագրավ է այն հանգամանքը, որ արդեն որոշ իմաստով գործելակերպ է դարձել այն, որ ճշտված պլանով բարձրացվում է պլանային ցուցանիշի մեծությունը, սակայն փաստացի մեծությունը ոչ միայն փոքր է լինում ճշտված պլանով նախատեսվող մեծությունից, այլև շատ հաճախ չի ապահովվում նույնիսկ նախնական պլանավորված մեծությունը: Սա մտահոգությունների տեղիք է տալիս առ այն, որ, ըստ ամենայնի, **պլանավորման ոլորտում առկա են բավական լուրջ խնդիրներ:** Այսպես, «2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ի սկզբանե պլանավորվել էր, որ պետական բյուջեի ծախսերը կազմելու են 1,607.3 մլրդ դրամ, այնուհետև ճշտված պլանով բարձրացվել էին մինչև 1,673.1 մլրդ դրամ, սակայն փաստացի ծախսերը կազմել են ընդամենը 1,449.3 մլրդ դրամ: Կամ՝ պլանավորվել էր, որ ընթացիկ ծախսերը կազմելու են 1,356.9 մլրդ դրամ, այնուհետև ճշտված պլանում այդ թիվը բարձրացվել է (1,396.0 մլրդ դրամ), սակայն փաստացի մեծությունը (1,275.5 մլրդ դրամ) «հեռու» է նույնիսկ նախնական պլանային մեծությունից:

Ընթացիկ ծախսերը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են դրա քոլոր բաղադրիչների գծով:

«Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածով արձանագրվել է 19.0% թերակատարում:

Վերը նկարագրված պլանավորման խնդիրը առկա է նաև դրամաշնորհների գծով. ի սկզբանե պլանավորվել էր ծախսել 165.2 մլրդ դրամ, որը ճշտված պլանով բարձրացվել էր մինչև 179.0 մլրդ դրամ, սակայն փաստացի ինն ամսում այդ ուղղությամբ ծախսերը կազմել են ընդամենը 158.5 մլրդ դրամ (թերակատարումը 11.5%): Հատկանշական է, որ թերակատարված գումարի 42.4%-ը (8.7 մլրդ դրամը)

«Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» հոդվածի գծով է, ինչը վկայում է, որ կապիտալ ծախսերի կատարման հետ կապված խնդիրներ համայնքներում ևս առկա են:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,349.1	1,607.3	1,673.1	1,449.3	86.6
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	1,223.5	1,356.9	1,396.0	1,275.5	91.4
Աշխատանքի վարձարություն	121.5	131.3	138.1	130.1	94.2
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	115.8	140.3	152.4	123.5	81.0
Տոկոսավճարներ	127.6	144.8	144.7	132.2	91.4
Սուբսիդիաներ	100.1	108.7	120.4	112.4	93.3
Դրամաշնորհներ	137.2	165.2	179.0	158.5	88.5
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	443.8	442.8	454.9	446.9	98.3
Այլ ծախսեր	177.5	223.8	206.6	172.0	83.2
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	125.5	250.4	277.0	173.9	62.8
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), այդ թվում՝	126.6	256.4	283.0	179.0	63.2
Շենքեր և շինություններ	114.2	219.9	237.6	150.5	63.4
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	10.3	31.5	38.9	25.6	65.6
Այլ հիմնական միջոցներ	1.9	4.9	6.4	2.9	44.7

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	-1.0	-6.0	-6.0	-5.1	84.8
--	------	------	------	------	------

Կապիտալ ծախսերը և թերակատարվել են: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները¹ 2022թ. առաջին ինն ամիսների կտրվածքով թերակատարվել են 37.2%-ով և կազմել 173.9 մլրդ դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը)² 36.8%-ով և կազմել 179.0 մլրդ դրամ: **Կապիտալ ծախսերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության թերի աշխատանքով՝ պլանավորված ծախսերն ամբողջությամբ և սահմանված ժամկետում կատարելու հանձնառության ապահովման անընդունակությամբ:** Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների դեպքում ևս ի սկզբանե պլանավորված մեծությունը (250.4 մլրդ դրամ) ճշտված պլանով բարձրացվել էր (մինչև 277.0 մլրդ դրամ), սակայն փաստացի մեծությունը «հեռու» է նույնիսկ նախնական պլանի մեծությունից: Փաստորեն ստացվում է, որ այս ժամանակահատվածի համար նախատեսված 120.7% աճի փոխարեն ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն աճել են ընդամենը 38.6%-ով: Արձանագրված աճն էական կհամարվեր, եթե պայմանավորված չլիներ «բազայի էֆեկտով» (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները բացարձակ մեծությամբ աճել են ընդամենը 48.4 մլրդ դրամով, մինչդեռ 2021 թվականի ինն ամիսներին դրանք նույնպես թերակատարվել էին՝ ճշտված պլանի համեմատ 32.2%-ով՝ 59.8 մլրդ դրամով):

Բյուջեի թերակատարման պատճառներից է այն, որ շատ դեպքերում բյուջեով պլանավորվում են բավական անիրատեսական (կամ առնվազն իրականացման առումով ոչ բավարար չափով հիմնավորված) ցուցանիշներ: Որպես ասվածի վկայություն՝ կարելի է բերել կապիտալ ծախսերի օրինակը: Այսպես, ճշտված պլանով կապիտալ ծախսերի գծով նախատեսված գումարը 2022 թվականի համար կազմում է 378.1 մլրդ դրամ (ընդ որում, սկզբնապես տարեկան պլանով նախատեսված էին 351.9 մլրդ դրամի կապիտալ ծախսեր), ինչը 159.7 մլրդ դրամով կամ 73.1%-ով գերազանցում է նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Մինչդեռ, ինն ամիսների ընթացքում փաստացի կատարվել են ընդամենը 179.0 մլրդ դրամի կապիտալ ծախսեր (ճշտված պլանով նախատեսված 283.0 մլրդ դրամի 63.2%-ը): Ընդ որում, արդեն առաջին

¹ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններն իրենցից ներկայացնում են կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունը:

կիսամյակի փաստացի ցուցանիշների (2022թ. առաջին կիսամյակում կապիտալ ծախսերը թերակատարվել էին 40.7%-ով) հրապարակումից անմիջապես հետո «Լույսն» ահազանգել էր², որ նման բարձր ցուցանիշներ, ամենայն հավանականությամբ, հնարավոր չի լինի ապահովել: Մինչդեռ, 2022թ. բյուջեի նախագիծը ներկայացնելիս կառավարությունը՝ որպես դրա կարևոր արժանիք, նշում էր աննախադեպ ծավալի կապիտալ ծախսերի պլանավորումը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պարզապես բյուջեին «ականջահաճություն» հաղորդելու համար դրանում ի սկզբանե պլանավորվում են անիրատեսական ցուցանիշներ, իսկ կառավարությունը տարվա ընթացքում դրանք իրականացնելու ուղղությամբ բավարար գործնական քայլեր չի ձեռնարկում: Նույն պատկերն է նաև այս տարի. 2023թ. բյուջեի նախագիծը ներկայացնելիս որպես հաջորդ տարվա բյուջեի կարևոր ձեռքբերում է նշվում դարձյալ աննախադեպ ծավալի կապիտալ ծախսերի պլանավորումը (557.7 մլրդ դրամ կամ 2022 թվականի բյուջեով պլանավորվածից 205.8 մլրդ դրամով կամ շուրջ 58.5%-ով ավելի): Մինչդեռ, այս առումով, մասնագիտական վերլուծություններով ձևավորվող թերահավատությանը գումարվում է նաև այն, որ **ներկա իշխանության բոլոր տարիների համար տխուր ավանդույթ է դարձել բյուջեով պլանավորված կապիտալ ծախսերի թերակատարումը:**

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

Բյուջետային ծախսերի թերակատարումը, բնականաբար, անդրադառնում է նաև նախատեսված ծրագրերի արդյունքների վրա: 2022 թվականի պետական բյուջեով ինն ամիսների ընթացքում նախատեսվում էր իրականացնել թվով 174 ծրագիր: Կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում այդ թիվն ավելացվել էր մեկով: 2022 թվականի ինն ամիսներին 175 ծրագրից փաստացի միջոցներ են օգտագործվել 170-ի գծով: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 939 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 836-ը կամ 89%-ը:

Պետք է նշել, որ քուլը պատասխանատու մարմինների ծրագրերի գծով արձանագրվել են թերակատարումներ: Փաստորեն, ստացվում է, որ **չնայած բյուջեով գումարը նախատեսվում և հատկացվում է, սակայն ծրագրերը, միևնույն է, ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն իրականացվում, ինչը, թերևս, վկայում է պետական մարմինների ոչ բավարար արդյունավետ աշխատանքի մասին:**

² «Տեղեկանք 2022թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ», էջ 8 <https://www.luys.am/img/artpic/small...86.pdf>

Բացարձակ մեծությամբ առավել էական թերակատարումներ արձանագրվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (65.5 մլրդ դրամով կամ շուրջ 32.9%-ով), ՀՀ պաշտպանության (50.5 մլրդ դրամով կամ շուրջ 16.6%-ով) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (23.4 մլրդ դրամով կամ շուրջ 14.8%-ով) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Պլանից էական շեղումներ են արձանագրվել հետևյալ ծրագրերի գծով.

- Ոռոգման համակարգի առողջացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 69.4%-ը:
- Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրով ծախսվել է 41.5 մլրդ դրամ (կամ ծրագրված ցուցանիշի 50.9%-ը), այդ թվում Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 37.2%-ը (6.6 մլրդ դրամ):
- Զրամադականության և ջրահեռացման բարելավման ծրագրի կատարողականը 46.1% է:
- Քաղաքային զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 10.5 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 59.4%-ը:
- Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի կատարողականը 63.7% է:
- Կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների ընդամենը 14.7%-ը:

Ուշագրավ է, որ բյուջեի հաշվետվությունում թերակատարված բոլոր ծրագրերի համար բերված են տարբեր պատճառաբանություններ (եղանակային վատ պայմաններ, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն), սակայն **հաշվի առնելով, որ վերջին չորս տարիներին թերակատարումները դարձել են «տխուր ավանդույթ», մտահոգություն է ստեղծվում, որ պետական կառավարման համակարգն ի վիճակի չէ ապահովել տնտեսության համար առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացումը:**

Պետական աջակցության ծրագրերը

- Կորոնավիրուսային համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով 2022 թվականի ինն ամիսներին իրականացված միջոցառումների գծով հատկացված միջոցների ծավալը կազմել է 13.5 մլրդ դրամ:
- Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումների շրջանակներում ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ:
- ՀՀ պետական բյուջեից Արցախի Հանրապետությանը տրամադրված միջպետական վարկի ծավալը կազմել է 130.4 մլրդ դրամ:
- Արտահանելի հատվածի վրա դրամի արժևորման բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և սահմանված պահանջներին բավարարող անհատ ձեռնարկատերերին կառավարության որոշմամբ նախատեսվում է տրամադրել պետական աջակցություն՝ նոր ընդունված աշխատողների գծով պետական բյուջե վճարված եկամտային հարկի 50 տոկոսի չափով: Այս ծրագրի գծով փաստացի ծախսերը դիտարկվող ժամանակահատվածում կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական բյուջեն 2022թ. ինն ամիսների ընթացքում եղել է հավելուրդային (հավելուրդը՝ 51.4 մլրդ դրամ)՝ պլանավորված պակասուրդայինի (պակասուրդը՝ 232.4 մլրդ դրամ) փոխարեն: **Փաստացիորեն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 283.8 մլրդ դրամով: Բյուջեի հավելուրդի ձևավորումն առավելապես պայմանավորված է ծախսերի թերակատարմամբ:** Ստացվում է, որ կառավարությունը մի կողմից տնտեսությունից հավաքագրել է հարկերը, մյուս կողմից, սակայն, բավականաչափ ծախսեր չի կատարել՝ այդպիսով նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Այսպիսի գործունեության արդյունքում **հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա 2022 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է զսպող (-2.2%) ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների (-1.2%) և ծախսերի (-1.1%) զսպող ազդեցություններով: Մինչդեռ 2022թ. պետական բյուջեի ուղերձով նախատեսվում էր, որ 2022-ին վարվելու է չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն³:**

Արդարության համար պետք է նշել, որ նման գործելակերպը հիմնավորված է տնտեսության ներկայիս «գերտաքացման» և գնաճային բարձր ճնշումների պարագայում ամբողջական պահանջարկի կրճատման առումով: Սակայն անհրաժեշտ է ծայրաստիճան զգույշ լինել, քանի որ նման քաղաքականության իրականացումը սովորաբար առաջին հերթին զսպող ազդեցություն է ունենում ամբողջական պահանջարկի այնպիսի բաղադրիչների վրա, ինչպիսիք են սպառումը և ներդրումները, որոնց որոշ տարատեսակների կրճատումը հատկապես անցանկալի է՝ հաշվի առնելով նախկինում արձանագրված տնտեսական անկումից տնտեսության վերականգնման անհրաժեշտությունը, ինչպես նաև ռուս-ուկրաինական հակամարտության ՀՀ տնտեսության համար ունեցող բարենպաստ ազդեցության տևողության անկանխատեսելիությունը: Ավելին, անառարկելի է, որ **զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի հաշվին՝ դրանց թերակատարման միջոցով:**

ՀՀ կառավարությունը շարունակում է ներգրավել ներքին պարտք՝ ձևավորված հավելուրդի պայմաններում: Ներքին փոխառու զուտ միջոցների ծավալը կազմում է 172.1 մլրդ դրամ: Նպատակային վարկերի գծով նախատեսված 64.4 մլրդ դրամից ինն

³ ՀՀ կառավարության 2022 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 77, https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2022t_nakhagits

ամսվա արդյունքներով ստացվել է ընդամենը 29.4 մլրդ դրամ, ինչը պայմանավորված է նպատակային (կապիտալ) ծրագրերի թերակատարման հետևանքով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2021թ.	2022թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	147.5	211.4	232.4	-51.4	-22.1
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	-92.3	285.9	352.1	85.8	24.4
1. Փոխառու զուտ միջոցներ	156.1	191.8	191.8	172.1	89.8
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-248.4	94.2	160.3	-86.3	-53.8
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	239.8	-74.5	-119.7	-137.3	114.7
1. Փոխառու զուտ միջոցներ, այդ թվում՝	335.0	34.0	11.6	-10.6	-91.3
Նպատակային վարկերի գծով	43.5	86.8	64.4	29.4	45.7
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-95.2	-108.5	-131.3	-126.7	96.5

2022թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,931.6 մլն ԱՄՆ դոլար, 2021թ. վերջի համեմատ աճել է 706.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 7.7%-ով: Այդ թվում, կառավարության պարտքը կազմել է 9,397.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 630.0 մլն ԱՄՆ դոլարով (7.2%-ով), իսկ ԿԲ պարտքը՝ աճել է 75.9 մլն ԱՄՆ դոլարով (16.6%-ով): ՀՀ կառավարության պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքի աճով (46.8%-ով կամ 1,207.4 մլն ԱՄՆ դոլարով), մինչդեռ արտաքին պարտքը նվազել է (9.3%-ով կամ 577.4 մլն ԱՄՆ դոլարով):

Նախորդ տարեվերջի համեմատ ՀՀ պետական պարտքի ցուցանիշները դրամային և դոլարային արտահայտությամբ փոփոխվել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար նվազել 9%-ով (398.1 մլրդ դրամով) և աճել 7.7%-ով

(706.0 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է դրամի 2022 թվականի սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ 2021 թվականի տարեվերջի համեմատ 15.5%-ով արժևորմամբ:

Աղյուսակ 5. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2021թ.	Առ 30.09.2022թ.	Փոփո- խություն (%)	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, առ 30.09.2022թ. (%)
(մլրդ դրամ)				
ՀՀ պետական պարտք	4,429.6	4,031.5	(9.0)	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	4,209.8	3,814.9	(9.4)	94.6
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	2,972.4	2,278.6	(23.3)	56.5
- ՀՀ կառավարության ներքին պարտք	1,237.4	1,536.3	24.2	38.1
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	219.8	216.6	(1.4)	5.4
(մլն ԱՄՆ դոլար)				
ՀՀ պետական պարտք	9,225.6	9,931.6	7.7	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	8,767.9	9,397.9	7.2	94.6
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	6,190.7	5,613.3	(9.3)	56.5
- ՀՀ կառավարության ներքին պարտք	2,577.2	3,784.6	46.8	38.1
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	457.7	533.6	16.6	5.4

Ներքին պարտքի ավելացման, ինչպես նաև ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնելու պայմաններում զգալիորեն աճել են նաև պետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Առաջնային շուկայում տեղաբաշխված պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել է շուրջ 1.7 տոկոսային կետով՝ հասնելով 10.7%-ի, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ շուրջ 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 11.06%: Ուշագրավ է, որ **չնայած բյուջեի հավելուրդին՝ կառավարությունը շարունակել է ավելացնել ներքին պարտքը** (նախորդ տարեվերջի համեմատ 24.2%-ով կամ 298.9 մլրդ դրամով), այն դեպքում, երբ պարտատոմսերի եկամտաբերության արձանագրված աճն էլ ավելի «թանկ» է դարձնում ներքին պարտքի սպասարկումը, առավել ևս, որ վերջին ամիսներին ՀՀ դրամը գրեթե շարունակաբար արժևորվել է:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

Ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական հակամարտությունը և դրան առնչվող իրադարձությունները, ընդհանուր առմամբ, դրականորեն են ազդել ՀՀ տնտեսական ակտիվության վրա (տնտեսական ակտիվության ցուցանիշը վերջին ամիսներին գրանցել է աճ): Դա հիմնականում կապիտալի և մարդկանց ներհոսքի կտրուկ աճի հետևանքով ներքին պահանջարկի ավելացման արդյունք է: Քանի որ այդ ներհոսքի ուղղությունը և չափերը, ըստ էության, գրեթե անկանխատեսելի են, չի կարելի բացառել աշխարհաքաղաքական իրավիճակի այնպիսի փոփոխության հնարավորությունը, որի պարագայում նշված հոսքերը կարող են դադարել՝ բացասաբար ազդելով ներքին պահանջարկի, հետևաբար նաև տնտեսական աճի վրա: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ռուս-ուկրաինական հակամարտությունը և դրան առնչվող իրադարձությունները ՀՀ տնտեսության վրա ունեն նաև բացասական ազդեցություն՝ պայմանավորված գնաճի արագացման և դրամի արժևորման բացասական հետևանքներով: Այս պայմաններում, կառավարությունը միջնաժամկետում տնտեսական անկումից խուսափելու նպատակով պետք է արդյունավետ միջոցառումներ իրականացնի՝ դրական զարգացումները պահպանելու և բացասական հետևանքների շուրջ ձևավորված ռիսկերը մեղմելու ուղղությամբ:

2022թ. ինն ամիսներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող, նախապես պլանավորված չեզոքի փոխարեն: Թեև տնտեսության ներկայիս «գերտաքացման» պայմաններում զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը արդարացված է, այնուամենայնիվ անհրաժեշտ է ծայրաստիճան զգույշ լինել, քանի որ նման քաղաքականության իրականացումը սովորաբար առաջին հերթին զսպող ազդեցություն է ունենում սպառման և ներդրումների վրա, որոնց կրճատումը կարող է վտանգավոր ազդեցություն թողնել տնտեսության վրա:

Պետական բյուջեի եկամուտների գերակատարման և ծախսերի թերակատարման արդյունքում 2022 թվականի ինն ամիսների արդյունքներով ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ պլանավորված պակասուրդի փոխարեն:

Պետական բյուջեի ծախսերը ճշտված պլանի համեմատ թերակատարվել են: Թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը: Թերակատարման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են:

Թերակատարումներ են արձանագրվել պատասխանատու բոլոր մարմինների ծրագրերի գծով: Այսինքն՝ չնայած այն փաստին, որ բյուջեով գումարը նախատեսվում և հատկացվում է, ծրագրերն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն իրականացվում, ինչը, թերևս, վկայում է պետական մարմինների ոչ բավարար արդյունավետ աշխատանքի մասին:

Կապիտալ ծախսերի թերակատարումը հիմնականում ՀՀ կառավարության կողմից պլանավորված ծախսերն ամբողջությամբ և սահմանված ժամկետում կատարելու հանձնառության ապահովման անընդունակության արդյունք է: Կասկածից վեր է, որ զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի հաշվին: Ավելին, ներքին պահանջարկի ներկայիս կտրուկ աճի պայմաններում խիստ անհրաժեշտ է, որ կառավարությունը նպաստի առաջարկի ավելացմանը, ինչի լավագույն միջոցներից մեկը հենց նպատակային կապիտալ ծախսեր կատարելն է:

Թերակատարման պատճառներից առանձնահատուկ պետք է նշել այն, որ շատ հաճախ, բյուջեով պլանավորվում են բավական անհրատեսական (կամ առնվազն՝ իրականացման առումով ոչ բավարար չափով հիմնավորված) ցուցանիշներ: Ընդ որում, այս դիտարկումը տեղին է ինչպես նախորդ տարիների պետական բյուջեների, այնպես էլ անգամ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի դեպքում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պարզապես բյուջեին «ականջահաճություն» հաղորդելու համար դրանում ի սկզբանե պլանավորվում են անհրատեսական ցուցանիշներ, իսկ հետագայում՝ տարվա ընթացքում, կառավարությունը դրանք իրականացնելու ուղղությամբ բավարար գործնական քայլեր չի ձեռնարկում:

Ներկա իշխանության բոլոր տարիների համար տխուր ավանդույթ է դարձել բյուջեով պլանավորված կապիտալ ծախսերի թերակատարումը:

Փաստացիորեն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 283.8 մլրդ դրամով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: